


# HERE (ՀԻՐ-Այստեղ)

**Գեղարվեստական Ֆիլմի Նախագծի Համառոտ Ակնարկ**

Բռեյդըն Քինգ Ֆիլմ

Սցենարի հեղինակ՝ Բռեյդըն Քինգ եւ Դենի Վալենթ

Պրոդյուսերներ՝ Լարս Կնուդսեն, Ջեյ Վոն Հոյ, Ջուլիա Քինգ

Գործադիր Պրոդյուսեր՝ Ձո Կեվորկ

Ասոսիատ Պրոդյուսեր՝ Ջեֆ Քալուսդյան

TRUCKSTOP Media / NO CHOICE Film Production
302A W. 12th St., #223 New York, New York 10014
(212) 989-7105 / info@truckstopmedia.com
www.truckstopmedia.com / www.herefilm.info

## Համառոտագիր

HERE (**ՀԻՐ-Այստեղ**)-ը դրամատիկ, բնատեսարաններով լեցուն ճանապարհի ֆիլմ է, որը բուռն ռոմանտիկ փոխհարաբերության դեպքերի ծավալումն է ամերիկացի արբանյակային քարտեզագրող ինժեների եւ գեղարվեստական լուսանկարիչ տարագիր հայուհու միջեւ, ովքեր պահի մղումով որոշում են միասին ճամփորդել չքարտեզագրված տարածքով:

## Սեղմագիր

Վիլ Շեփարդը ամերիկացի արբանյակային քարտեզագրող ինժեներ է, որը պայմանագիր է կնքել կազմելու տեղանքի մի նոր, ավելի ճշգրիտ հետազոտություն Հայաստան երկրի մասին: Արդյունաբերության մեջ, նրա մենավոր աշխատանքը՝ արբանյակային պատկերները տեղազննելով ճշգրտությունը ստուգելը եւ անկանոնությունները վերհանելը, կոչվում է «ենթաարբանյակային զննումներ»: Նա ինքնուրույն արել է դա տարիներ շարունակ ամբողջ աշխարհով մեկ: Բայց այս ճամփորդության ժամանակ նրա չափումները չեն համընկնում:

Վիլը հանդիպում է Գադարինե Նաջարյանին գեղջկական հյուրանոցում: Նա, ուժեղ եւ գայթակղիչ, գեղարվեստական լուսանկարիչ տարագիր հայուհի է, երկար տարիներ անց առաջին ճամփորդությունն է անում՝ եռանդագին փորձելով հասկանալ, ինչ կապ, եթե կա այդպիսին, նա դեռ ունի իր իսկ երկրի եւ մշակույթի հետ: Մոլեռանդ անկախությամբ Գադարինեն մաքառում է հաշտեցնել արտասահմանում ապրած իր կյանքը հայկական արմատներով, որ այդքան խորն են մխրճված իր ներսում:

Մի ակնթարթային, անգիտակից կապ կա այս երկու միայնակ ճամփորդների միջեւ. նրանք պահի մղումով վճռում են շարունակել միասին: HERE (ՀԻՐ-Այստեղ) -ը պատմում է նրանց ինքնատիպ ճամփորդության եւ դրանով անձնական դրամատիկ վերափոխման մասին, որով անցնում է նրանցից յուրաքանչյուրը:

Վիլը եւ Գադարինեն շարժվում են Հայաստանով եւ նրա ուշագրավ բնատեսարաններով՝ լուսանկարելով, չափելով ու վերապրելով ճամփորդությունն իրենց ուրույն ձեւերով եւ, վերջապես, նայելով մեկը մյուսի աչքերով:

Նրանց ճամփորդությունը տանում է երկրով մեկ. հյուսիսում՝ Լոռվա մարզից մինչեւ Իրանի սահմանը՝ հարավում եւ, վերջապես, դիվանագիտորեն չսահմանված Լեռնային Ղարաբաղի շրջան: Այստեղ է, որ նրանք ստիպված են առճակատվել իրենց խորացող հարաբերության եւ յուրաքանչյուրի համար դրա բարձրացրած բարդ հարցերի առջեւ:

Ամբողջ ճանապարհին Վիլը շարունակաբար մարտնչում է սխալ տվյալների հետ, որ իր ճամփորդությունը ձախողման է մատնվում, այնինչ Գադարինեն բախվում է ավելի շատ անձնական վայրիվերումներին՝ ազգություն, մշակույթ, ընտանիք, հին ընկերներ: Մինչ նա սկսում է հայտնաբերել նոր փոխհարաբերություն իր հայրենիքի հետ, Վիլն սկսում է կասկածի տակ առնել իր ընտրած մենակյաց կյանքը:
Երկուսն էլ սկսում են խորապես կապվել, քանի որ ինքնության եւ իրենց աշխարհների ընկալումը ընդարձակվում է: Երբ նրանց ճամփորդությունը մոտենում է ավարտին, յուրաքանչյուրը պիտի մնա իր ուղեւորությունից ստացած եզրահանգումների հետ եւ պիտի որոշի, թե ուր գնա HERE (ՀԻՐ-Այստեղ) -ից:

DEVELOPED IN PART BY THE SUNDANCE INSTITUTE FEATURE FILM PROGRAM
SUNDANCE INSTITUTE
FESTIVAL DE CANNES OFFICIAL SELECTION CINEFONDATION
Creative Capital
TRIBECA FILM INSTITUTE



## Հետազոտողի Պատմությունները

HERE (ՀԻՐ) -ը պարունակում է համառոտ միջախաղերի տեսաշար. մտացածին հեքիաթներ առասպելական հետազոտողների, ովքեր երկիրը քարտեզագրում են ֆանտաստիկ ձեւերով: Մեկը պատկերացնում է, որ երկիրը իսկայական ծով է եղել ու մտորում նավերի մասին, որ կարող էին նավարկել դրանով: Մեկ ուրիշը հորինում է աստղերի փոխարեն ամպերն օգտագործելու նավարկման մեթոդ: Երրորդը ստեղծում է իրական չափերի քարտեզներ: Եվ այսպես շարունակ:

Այս միջախաղերը պատմության երազանքներն են:

Դրանք կլուսաբանվեն մի քանի հանրահայտ ավանգարդ եւ փորձարարական նկարահանողների հետ համագործակցությամբ, իրենք իսկ հետազոտողներ, ովքեր կուղարկվեն դեպի ամբողջ աշխարհի մի շարք արտասովոր բնապատկերներ, որպեսզի «քարտեզագրեն»՝ օգտագործելով իրենց ինքնատիպ մեթոդները:

Երբ այդ առասպելական պատմությունները կսլվեն բանաստեղծական ձայնանին մեկնաբանությամբ, կինեմատոգրաֆիկ ներկայացումներով արտառոց բնատեսարանները կգրավեն էկրանը. որոշները դանդաղեցված, մյուսները աբստրակտ, մնացածները՝ կենդանի եւ անշարժ:

Կենդանի տեսողական անցումների միջոցով՝ միջախաղերը սահուն կերպով կմիահյուսվեն ֆիլմում եւ դրանից դուրս՝ ընդարձակելով դրա նյութը, թեմաները, հուզական ազդեցությունը եւ կինեմատոգրաֆիկ բառապաշարը: Այդ ամենի մեջ HERE (ՀԻՐ) -ը հետեւում է ենթարկող դրամայի եւ ստեղծարար արտահայտչականության միահյուսման ավանդույթին, որը սկսվել է այնպիսի մերօրյա դասական անկախ ֆիլմերից, ինչպիսին են՝ MY OWN PRIVATE IDAHO(ՄԱՅ ՕՈՒՆ ՊՌԱՅՎԸԹ ԱՅԴԱՀՈ), WINGS OF DESIRE (ՈՒԻՆԳՍ ՕՖ ԴԻԶԱՅՐ), MY LIFE AS A DOG (ՄԱՅ ԼԱՅՖ ԷԶ Ը ԴՈԳ) եւ BREAKING THE WAVES (ԲՌԵՅՔԻՆԳ ԴԸ ՎԵՅՎՍ): Դրանք թույլ են տալիս HERE (ՀԻՐ) մի երազելի կյանք՝ հարուստ ու կենդանի, որպես մեր սեփականը՝ միաժամանակ միավորելով անհամեմատելի կինեմատոգրաֆիկ ավանդույթները, խորացնելով նախագծի արտիստիկ ամբողջությունը, ընդարձակելով լսարանը եւ ուժգնացնելով պատմության եւ թեմաների վերապրումը դիտողի կողմից:

Լուսանկարներ (L - R):

*O,* Ջուլի Մուրեը՝ *Հարդվուդյան Գործընթացը*, Դեյվիդ Գեթեն՝ *Ես Ասացի Այո,* Ֆիլ Սոլըմըն՝ *Հունաստանն Ինձ Համար,* Բարբըրա Միթեր:
Բոլոր ֆիլմերը ներդրումներ են Boxhead Ensemble (Բոքսհեդ Անսամբլ)*Stories, Maps and Notes-ը Half-Light* շրջագայությունից:



Boxhead Ensemble-ը (Բոքսհեդ Անսամբլ) 2001թ  Դուբլինի Կինոփառատոնին:

## Ֆիլմից Այն Կողմ. HERE (ՀԻՐ)-ը եւ Boxhead Ensemble-ը (Բոքսհեդ Անսամբլ)

Տարիներ առաջ, HERE (ՀԻՐ) -ի ռեժիսոր Բրեյդըն Քինգը լուսանկարչուհի Լոռա Մոյայի հետ համագործակցությամբ ստեղծեց DUTCH HARBOR: WHERE THE SEA BREAKS ITS BACK (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ. ՎԵԸՐ ԴԸ ՍԻ ԲՌԵՅՔՍ ԻԹՍ ԲԵՔ) ֆիլմը: DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ)-ը Ալյասկայի արեւմտյան ափում Ալեության  կղզիների համայնքի կյանքի ու բնաշխարհի քնարական պատկերում է: Ֆիլմը միահյուսում է տեղաբնակների անձնական պատմությունները աշխարհի ծայրերից մեկում ապրելու մասին՝ Հոլանդական Նավահանգստի բնատեսարանի, դրա համայնքի ու Բերինգի ծովում ծովախեցգետին որսացող նավերի պատկերներով:

Ի լրումն ավելի ավանդական փառատոնային ցուցադրումներին ու տարածմանը, DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ) -ը շրջեց Միացյալ Նահանգներով ու Եվրոպայով՝ կենդանի, իմպրովիզացված ձայնակցմամբ Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ) կողմից, շրջող երաժիշտների խմբով՝ կոմպոզիտոր Մայքլ Քրասների գլխավորությամբ՝ կազմավորված՝ ապահովելու ֆիլմի ձայնանակցումը:

Քինգը շարունակել է աշխատել Ensemble-ի հետ սկսած DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ) -ը ֆիլմից ՝ թողարկելով կենդանի երաժտություն եւ ֆիլմերի ծավալումներ  կինոնկարահանողներ Ջեմ Քոհենի, Գուստավ Դոյչի, Գերարդ Հոլթիուսի, Փիթեր Հըթոնի, Բարբերա Մեթերի, Ջուլի Մուրեյի, Քրիս Փթիթի, Ֆիլ Սոլըմընի, Գայ Շերվինի, Անիտա Թաչիերի եւ Նաոմի Ումանի եւ այլոց հետ համագործակցությամբ: Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ)հերթափոխվող շարքը ներգրավել է Գիյերմո Գրեգորիոյին, Դեյվիդ Գրաբսին, Գլեն Կոչեին (Wilco), Ֆրեդ Լոնբերգ-Հոլմին, Վիլ Օլդհեմին, Ջիմ Օ՛ Ռուրքին (Sonic Youth), Ջեֆ Փարկերին (Tortoise), Թիմ Ռութիլիին (Califone), Ջեֆ Թուիդիին, Սկոտ Տումային, Քեն Վանդեռմարկին, Ջիմ Ուայթին (Dirty Three, Cat Power) եւ շատերին:

Քինգը, Քրասները եւ Ensemble-ը կշարունակեն իրենց համագործակցությունը HERE (ՀԻՐ) -ի մեջ, սակայն ավելի մեծ նկրտումներով ու նպատակամղվածությամբ: Ոչ ավանդական վայրերում  Ֆիլմի ձայնակցման ձայնագրման հարցը քննարկման մեջ է. Ջեյմս Թուռելլի *Ռոդենի խառնարանը,* օրինակ, եւ մի քանի հինավուրց վանքեր Հայաստանում: Ի լրումն, նախատեսվում է կենդանի երաժշտական հնչողությամբ միջազգային շրջագայություններ եւ իրադարձություններ, որոնք ուղեկցելու են ֆիլմի ցուցադրումը՝ համատեղելով պրեմիերաների եւ DVD թողարկմանը աջակցելու հետ:

Կոնցեպտուալապես, այդ շրջագայություններն ու իրադարձությունները ոտքից գլուխ շուռ կտան HERE (ՀԻՐ) -ը՝ ուղեկցվելով Հետազոտողի Պատմության միջախաղերի ավելի երկար «ռեժիսորական կրճատումներով»՝  սահուն կապելով HERE (ՀԻՐ) -ի դրամատիկ պատմությունից վերցրած նկարահանված բնատեսարանների հետ: Ֆիլմի նախնական թատերականացված տարբերակից առանձին, այս իրադարձությունները կլինեն HERE (ՀԻՐ) -ի «երազային կյանքի» ներքին դիտում: Դրանք կընդլայնեն ֆիլմի թեմատիկ  շրջանակը եւ լսարանը՝ մեծապես երկարացնելով դրա կյանքը, հեղինակությունը մամուլում եւ պոտենցիալ շահույթը.
Ամբողջական նախագիծը՝ ֆիլը, Հետազոտողի Պատմությունները, Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ) շրջագայությունները, նախատեսված է դառնալու մի տեսակ մակրո-քարտեզ կամ ինքնին Հետազոտողի Պատմություն՝ գործելով մի քանի պաշտոնական, պատմողական եւ կոնցեպտուալ մակարդակներում միաժամանակ՝  գերազանցելով լրատվամիջոցների եւ լսարանի բոլոր սահմանագծերը:

## Մրցանակներ եւ Պատվոգրեր

**Կաննի Կինոփառատոնի Ստուդիա (2008)**
HERE (ՀԻՐ) -ը տասնհինգ նախագծերից մեկն էր (եւ մեկը միայն երկու ԱՄՆ նախագծերից), որ ամբողջ աշխարհի ֆիլմերից ընտրվեց 2008թ Կաննի Կինոփառատոնի Ստուդիային ներկայացվելու համար:

**Sundance / NHK Միջազգային Կինոարտադրողների Մրցանակ (2008)**
2008 թ Sundance-ի կինոփառատոնին HERE (ՀԻՐ) -ի սցենարը եւ ռեժիսոր Բռեյդըն Քինգը ճանաչվեցին Sundance / NHK Միջազգանին Կինոնկարահանողների Մրցանակի ԱՄՆ -ի հաղթողներ:

**Չիկագոյի Ժամանակակից Արվեստի Թանգարան (2008)**
Բռեյդըն Քինգի հայկական ուսումնասիրության եւ տեղանքի հետախուզական լուսանկարները ընդգրկվել են Չիկագոյի Ժամանակակից Արվեստի Թանգարանի վերջին՝ «Քարտեզագրել Եսը» («Maping the Self») ցուցահանդեսում:

**Ռոքեֆելլեր / Renew Media / Tribeca Film Institute Fellowship (2008)**
Բռեյդըն Քինգը 2008թ HERE (ՀԻՐ) -ի համար պարգեւատրվել է 2008 թ. Ռոքֆելլեր/ Renew Media Fellowship մրցանակով:

**Sundance Institute: January and June Screenwriters Labs (2007)***
HERE (ՀԻՐ) -ը տասներկու նախագծերից մեկն էր, որ ընտրվել էր 2007թ հունվար եւ հունիս ամիսներին Sundance Institute Screenwriters Labs-ի կողմից:

**Sundance Institute: June Directors Lab (2007)***
HERE (ՀԻՐ) Ը ութ նախագծերից մեկն էր, որ ընտրվեց հունիսի 2007թ Sundance Institute Directors Lab-ի կողմից:

**Էնընբերգ Գեղարվեստական Ֆիլմերի Միություն (2007)**
Բռեյդըն Քինգը պարգեւատրվել է Էնընբերգի Գեղարվեստական Ֆիլմերի Միության կողմից HERE (ՀԻՐ) -ի համար:

**Ալֆրեդ Փ Սլոանի Հիմնադրամի Միություն (2007)**
Բռեյդըն Քինգը 2007-ին Ալֆրեդ Փ. Սլոանի անդամ դարձավ HERE (ՀԻՐ) -ի համար:

**Լոտերդամի Կինոփառատոնի Cinemart Producer’s Lab (2007)**
Պրոդյուսեր Ջուլիա Քինգը ԱՄՆ պորդյուսերներից մեկն էր ընտրված Ռոտերդամի Կինոփառատոնի 2007 CineMart Producer's Lab-ի կողմից HERE (ՀԻՐ) -ի համար:

**IFP / No Borders (2005)**
HERE (ՀԻՐ) -ը ընտրվել է 2005 IFP Market-ի հեղինակավոր No Borders բաժնի կողմից:

**Creative Capital Foundation (2005)**
Բռեյդըն Քինգը ստացավ Creative Capital-ի 2005թ դրամաշնորհ HERE (ՀԻՐ) -ը նկարահանելու համար:

## Ներկայիս Կարգավիճակը

HERE (ՀԻՐ) -ը նկարահանման եւ ֆինանսավորման վերջնական փուլում է: Ֆիլմն ամբողջովին կնկարահանվի Հայաստանի տարածքում: Գլխավոր լուսանկարահանումը նշանակված է 2009թ մայիսին:

HERE (ՀԻՐ) -ը արտադրվում է Լարս Կնուդսենի, Ջեյ Վոն Հոյի PARTS AND LABOR (ՓԱՐԹՍ ԷՆԴ ԼԵՅԲՈՐ), FAY GRIM (ՖԵՅ ԳՐԻՄ), JUNEBUG(ՋՈՒՆԲԱԳ)) եւ Ջուլիա Քինգի AMERICAN SPLENDOR(ԸՄԵՐԻՔԸՆ ՍՊԼԵՆԴԸՐ ) կողմից: Ջուլիան եւ ռեժիսոր Բռեյդըն Քինգը կատարել են մի քանի ուսումնասիրություն եւ հետախուզական ճամփորդություն Հայաստանում՝ լայնամասշտաբ շրջագայություններով ամբողջ երկրով եւ ընկղմվելով դրա ֆիլմի եւ ստեղծագործ համայնքների մեջ: Նրանք շարունակում են համալրել նկարահանման կազմը՝ միաժամանակ աշխատելով ավարտել ֆիլմի ֆինանսավորումը:

**Միայն վեց նախագծեր էին հրավիրված ե՛ւ 2007թ Sundance Screenwriters Labs ե՛ւ 2007թ Sundance Directors Lab:*

## Կինոարտադրության Թիմը

### Սցենարի Հեղինակ / Ռեժիսոր



**Բռեյդըն Քինգը** համառեժիսոր է եղել DUTCH HARBOR: WHERE THE SEA BREAKS ITS BACK (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ. ՎԵԸՐ ՎԸ ՍԻ ԲՌԵՅՔՍ ԻԹՍ ԲԵՔ) ֆիլմում: Լուսանկարչուհի Լոռա Մոյայի հետ համագործակցությամբ ստեղծած DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ) ֆիլմը քնարական, չհերթափոխվող շարքով խորհրդածում է Ալյասկայի արեւմտյան ափի Ալեության կղզիների համայնքի կյանքի ու բնության շուրջ: DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ) -ը ցուցադրվել է ավելի քան 20 միջազգային փառատոններում, իսկ միջազգային ասպարեզում ֆիլմը շրջել է կենդանի, խանդավառ ծափահարվող Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ) վերափոխված ձայնակցմամբ՝ կոմպոզիտոր Մայքլ Քրասների ղեկավարությամբ: Կինոթատրոններում ֆիլմը ցուցադրվել է Եվրոպայում ED Distribution-ի կողմից. Plexifilm-ը նոր, դելյուքս DVD թողարկումը աշխարհով մեկ կտարածի 2009թ:

Քինգը գովազդային արտադրության համար ներկայացված է նյու-յորքյան Washington Square Films-ի կողմից: Գովազդային պատվիրատուների թվում են՝ American Airlines-ը, ESPN-ը, Johnson and Johnson-ը, Miller Beer-ը, Nikon-ը, Drug-Free America-ի ընկերակցությունը, Siemens-ը եւ UNICEF-ը: Նա ռեժիսոր է երաժշտական վիդեո եւ կարճամետրաժ ֆիլմերի՝ Sonic Youth-ի, Chan Marshall-ի, Will Oldham-ի, Tortoise-ի, Low-ի, Yo La Tengo-ի եւ Sparklehorse-ի համար: Քինգը նաեւ ռեժիսորն է ցնցող ինտերակտիվ DVD նախագիծ LOOKING FOR A THRILL (ԼՈՒՔԻՆ ՖՈՌ Ը ԹՐԻԼ)-ի, որը ցուցադրում է ավելի քան հինգ ժամ տեւողությամբ տպավորիչ հարցազրույցներ ավելի քան 112 երաժիշտների եւ նկարիչների հետ

Վերջին ոչ նկարագրական աշխատանքը ներառում է HEAVEN IS A PLACE (ՀԵՎԸՆ ԻԶ Ը ՓԼԱՅՍ) / NOTHING EVER HAPPENS (ՆԱԹԻՆ ԷՎԸՐ ՀԵՓԸՆՍ)(2007), ֆիլմ եւ վիդեո ինստալացիա՝ պատվիրված Քրիս Դոյլի կողմից 50,000 BEDS ցուցահանդեսի համար Ալդրիչի Ժամանակակից Արվեստի թանգարանում եւ THE STORY IS STILL ASLEEP(ԴԸ ՍՏՈՌԻ ԻԶ ՍՏԻԼ ԸՍԼԻՓ) -ը դինամիկ, բազմադրվագ տեսահատված կենդանի երաշտության ուղեկցությամբ, որի պրեմիերան տեղի է ունեցել 2008թ Sundance Կինոփառատոնում: Նրա հայկական HERE (ՀԻՐ) -ի տեղանքի հետախուզական լուսանկարները ընդգրկվել են 2008թ գարնան ՔԱՐՏԵԶԱԳՐԵԼ ԵՍԸ ցուցահանդեսում Չիկագոյի Ժամանակակից Արվեստի Թանգարանում:

Քինգի աշխատանքը ցուցադրվել է բոլոր խոշոր ամերիկյան հեռարձակվող ցանցերով եւ HBO, BBC, Sundance Channel, MTV, Channel 4 (UK) եւ այլնով: Նա որպես հրավիրյալ դասախոսել է Յեյլի Համալսարանում, Հարավային Կալիֆորնիայի Համալսարանում, Բարդի քոլեջում, Վիթըն քոլեջում եւ Նյու Յորքի Քաղաքային Համալսարանի Ավարտական դպրոցում: Քինգը սովորել է Լոս Անջելեսի USC Կինո-Հեռուստատեսության դպրոցում՝ ավարտելով Magna Cum Laude-ը 1993թ:

Ապրում է Նյու Յորքում իր կնոջ՝ Միմիի եւ երկու որդիների՝ Ջոնասի եւ Օլիվերի հետ:



### Համահեղինակ

Ավստրալացի գրող **Դանի Վալենթը** ութ տարի անցկացրել է աշխարհով մեկ ճամփորդելով Lonely Planet (Լոնլի Պլենետ) ուղեցույց հրատարակման համար՝ ուսումնասիրելով եւ գրելով տարբեր վայրերի մասին, ներառյալ՝ Բուլղարիան, Բոները, Հոն Կոնգը, Նյու Յորքը, Հնդկաստանն ու Թուրքիան: Նրա *World Food Turkey* գիրքը անվանակարգվել է Անդրե Սիմոնի Հիշատակի Հիմնադրամի Գրքերի մրցանակի համար 2000թ, եւ նա Lonely Planet Television's SIX DEGREES (ՍԻՔՍ ԴԻԳՐԻՍ) շարքի խորհրդական էր:

Վալենթը ստեղծագործել է արձակ եւ չափածո գրվածքներ իր կարիերիայի ընթացքում. նրա կարճ պատմվածքները եւ բանաստեղծությունները հայտնվել են բազմաթիվ ավստրալական գրական ամսագրերում: Նա հրատարակել է բանաստեղծությունների եւ կարճ պատմվածքների գիրք, *Դանի Վալենթ. Աշխատություններ*, 1990թ:
Ներկայումս Դանին ապրում է Ավստրալիայի Մելբուռն քաղաքում, որտեղ աշխատում է որպես անկախ լրագրող՝ պարբերաբար թղթակցելով *Good Weekend* -ին՝ Ավստրալիայի նորությունների գլխավոր ամսագրին եւ *The Age* -ին՝ Մելբուռնի օրաթերթին:

(շարունակելի)

## Գլխավոր Դերասան



**Լուբնա Ազաբալ** (Գադերինե Նաջարյան) PARADISE NOW (ՓԵՌԸԴԱԸՍ ՆԱՈՒ) ֆիլմում տեսնելուց հետո, ռեժիսոր Բռեյըըն Քինգը հրավիրեց նրան իր հետ երեք շաբաթ աշխատելու 2007թ Sundance Directors Lab-ում, որտեղ անմիջապես պարզ դարձավ, որ Գեդարինեի դերի համար ավելի կատարյալ դերասան չէր կարող լինել:

Բնակվելով Բրյուսելում եւ Փարիզում՝ Ազաբալը հայտնվել է ավելի քան տասնհինգ գեղարվեստական ֆիլմերում, ներառյալ՝ Ռիդլի Սկոտի BODY OF LIES (ԲԱԴԻ ՕՖ ԼԱՅՍ), Անդրե Թեշինի FAR (ՖԱՐ) եւ CHANGING TIMES (ՉԵՆՋԻՆ ԹԱՅՄՍ), Թոնի Գաթլիֆի EXILS*(ԷՔԶԱՅԼՍ), Հանի Աբու-Ասսադի Ակադեմիայի Մրցանակի Անվանակարգված PARADISE NOW (ՓԵՌԸԴԱԸՍ ՆԱՈՒ) եւ Ռոբերտ Քեշիշյանի ARAM (ԱՐԱՄ) ֆիլմերը: 2007թ Ազաբալը արժանացել է Երուսաղեմի Կինոփառատոնի Ամենախոստումնալից Դերասանուհու մրցանակին Գայ Նաթիվի STRANGERS (ՍՏՐԵՅՆՋԸՐՍ) ֆիլմում դերասանական խաղի համար: Նա ավարտել է Բրյուսելի Արքայական Կոնսերվատորիան:

*Հաղթող, Լավագույն Ռեժիսոր, 2004թ Կաննի Կինոփառատոն, Անվանակարգվել է Ոսկե Արմավենու համար:



## Կինեմատոգրաֆ

Ֆրանսիացի կինեմատոգրաֆ **Ագնես Գոդառդը** քաջ հայտնի է իր քնարական աշխատանքով Քլեռ Դենիսի հետ (THE INTRUDER (ԴԻ ԻՆԹՐՈՒԴԸՐ), BEAU TRAVAIL (ԲՈ ԹՐԱՎԱՅ), TROUBLE EVERY DAY (ԹՌԱԲԸԼ ԷՎՌԻ ԴԵՅ), ինչպես նաեւ Էմանուել Քրիալեսի GOLDEN DOOR (ԳՈԼԴԸՆ ԴՈՌ), Էրիկ Զոնկայի THE DREAMLIFE OF ANGELS (ԴԸ ԴՐԻՄԼԱՅՖ ՕՖ ԷՆՋԸԼՍ) եւ Կլոդ Բեռիի ENSEMBLE C'EST TOUT (ՕՆՍԱՄԲԸԼ ՍԷ ՏՈՒ) ֆիլմերում: Գոդառդը նկարահանել է ավելի քան 20 գեղարվեստական ֆիլմ. սկզբնական հաջողությունները որպես կինոօպերատոր եւ օգնական ներառում են Վիմ Վենդերի PARIS (ՓԵՐԻՁ), TEXAS (ԹԵՔՍԸՍ) եւ WINGS OF DESIRE (ՎԻՆԳՍ ՕՖ ԴԻԶԱՅՐ)եւ Փիթեր Գրինվեյի A ZED AND TWO NOUGHTS (Ը ԶԵԴ ԸՆԴ ԹՈՒ ՆԱԹՍ) ժապավենները: Նա մրցանակակիրն է 2001թ Սեզարի Մրցանակաբաշխության (ֆրանսիական Օսկար) եւ 2001թ Կինոքննադատների Ազգային Միության Մրցանակի (ԱՄՆ) Լավագույն Կինեմատոգրաֆիայի համար՝ Դենիսի BEAU TRAVAIL (ԲՈ ԹՂԱՎԱՅ)-ում նրա աշխատանքի համար:



## Կոմպոզիտոր

**Մայքլ Քրասները** ֆիլմի երաժշտությունն սկսեց գրել **Boxhead Ensemble-**ի (Բոքսհեդ Անսամբլ) հետ. խումբ, որ նա առաջին անգամ կազմեց 90-ականների սկզբին՝ կինոնկարահանողներ Բռեյդըն Քինգի եւ Լեռի Ստակիի մի քանի կարճ ֆիլմերում՝ ճանաչվելու համար: Ensemble-ը շարունակեց ձայնագրել ձայնակցում Քինգի DUTCH HARBOR: WHERE THE SEA BREAKS ITS BACK (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ. ՈՒԷՐ ԴԸ ՍԻ ԲՌԵՅՔՍ ԻԹՍ ԲԵՔ) ֆիլմի համար Truckstop Audio Recording Co.-ում(Չիկագո), որտեղ նա հիմնադիր գործընկերն էր Քինգի եւ երաժշտի/ձայնայգրման ինժեներ Ջոսեֆ Ֆերգուսոնի հետ:

Հաջորդ Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ) ձայնգրությունները ներառում են երկու կենդանի ալբոմներ DUTCH HARBOR (ԴԱՉ ՀԱՐԲԸՐ) ֆիլմի ցուցադրման շրջագայություններից (*Գնալու Վերջին Տեղը* եւ *Նիագարայի Ջրվեժը*), ձայնակցում Ջոն Հայըմսի HBO փաստավավերագրական THE SMASHING MACHINE (ԴԸ ՍՄԵՇԻՆ ՄԸՇԻՆ)-ի համար եւ ստուդիայի թողարկած ալբոմները՝ *Two Brothers, Quartets* եւ *Nocturnes-ը:*

Տարիներ անց Boxhead Ensemble-ի (Բոքսհեդ Անսամբլ) հերթափոխվող շարքը ներառեց Քեն Վանդերմարկին, Ջիմ Օ՛ Ռուրքին (Sonic Youth, Gastr del Sol), Ուիլ Օլդհեմին (Palace Music, Bonnie Prince' Billy), Գլեն Կոչին (Wilco), Դուգ Մըքքոմբսին (Tortoise), Թիմ Ռութիլիին (Califone), Ֆրեդ Լոնբերգ- Հոլմին, Սկոտ Թումային, Ջիմ Ուայթին (Dirty Three, Cat Power) եւ այլոց:

(շարունակելի)

## Պրոդյուսերներ



Հիմնված 2004թ՝ **Լարս Նուդսեն** եւ **Ջեյ Վեն Հոյ** կինոարտադրող ընկերությունը հավատարիմ է ռեժիսորակենտրոն, համագործակցող կինոնկարահանումներին: Ընկերության հետեւողականության անբաժանելի մաս է անսասան նվիրումը յուրաքանչյուր նախագծին, ճշմարիտ հարգանքն ու սերը ֆիլմի ընթացքին:

2008թ հոկտեմբերին Parts and Labor-ը ստորագրեցին First-Look / Development գործարք պրոդյուսեր Սկոտ Ռուդինի (Միռամաքս / Դիսնեյ) հետ: 2008թ. Տորոնտոյի Կինոփառատոնին *VARIETY- ին* առանձնացրեց Նուդսենին եւ Վեն Հոյին «10 Պրոդյուսերներ Դիտելու» ցանկում: 2006թ երկուսն էլ ներգրավված էին *Filmmaker* ամսագրի «Անկախ Ֆիլմերի Նոր Դեմքեր»-ի եւ *Paste* ամսագրի «Arthouse Powerhouse Producers»- լավագույն տասնյակում:

Նուդսենը եւ Վեն Հոյը արտադրել են Քելլի Ռեյչարդի ծափեր վայելած OLD JOY (ՕԼԴ ՋՈՅ) գեղարվեստական ֆիլմը, Քեմ Առչըրի WILD TIGERS I HAVE KNOWN (ՎԱՅԼԴ ԹԱՅԳԸՐՍ ԱՅ ՀԵՎ ՆՈՈՒՆ), Սթիվ Քոլինսի GRETCHEN (ԳՐԵՉԸՆ)եւ Սպենսեր Փարսոնսի I'LL COME RUNNING (ԱՅԸԼ ՔԱՄ ՌԱՆՆԻՆ):
Վերջին երկու նախագծերի՝ Նիկ Ֆաքլերի LOVELY(ԼԱՎԼԻ), STILL (ՍԹԻԼ) եւ Սո Յոնգ Քիմի TREELESS MOUNTAIN (ԹՌԻԼԵՍ ՄԱՈՒՆԹԸՆ) ժապավենների պրեմիերաները կայացան 2008թ Տորոնտոյի Կինոփառատոնին: Կինոթատրոններում երկուսն էլ կցուցադրվեն 2009թ:

Արտադրության վերջին փուլում գտնվող նախագծերը ներառում են՝ Քրուզ Էնջըլսի DON'T LET ME DROWN (ԴՈՈՒՆԹ ԼԵԹ ՄԻ ԴՌԱՈՒՆ) եւ Դեյվիդ Բարքերի UNTITLED (ԱՆԹԱՅԹԸԼԴ) ֆիլմերը: Ընթացքի մեջ են Քեմ Արչըրի, Սո Յոնգ Քիմի, Նիկ Ֆաքլերի, Սպենսեր Փարսոնի եւ Բրեդլի Ռասթ Գրեյի նոր ֆիլմերը եւ դեբյուտներից՝ Ստիվ Դոուլթոնի SPRUNG (ՍՊՐԱՆԳ) , Էնդրյու Դոսանմուի MOTHER OF GEORGE (ՄԱԴԸՐ ՕՖ ՋՈՐՋ), Մեթ Ռոսի FRANK & LOLA(ՖՐԵՆՔ ԷՆԴ ԼՈԼԸ), Ջեյմս Քլըրքի (WAYWARD HO!(ՈՒԵՅՈՒԸՐԴ ՀՈ) ֆիլմերը:

Մոտակա ժապավեններ են Ջուլիա Լոկտեւի THE LONELIEST PLANET (ԴԸ ԼՈՆԼԻԵՍԹ ՓԼԵՆԵԹ), Էռըն Կացի COLD WEATHER (ՔՈԼԴ ՈՒԵԴԸՐ)), Մայք Միլսի UNTITLED (ԱՆԹԱՅԹԸԼԴ), Քարթըր Սմիթի TROLL (ԹՐՈԼ) եւ Բռեյդըն Քինգի (HERE (ՀԻՐ) նոր գեղարվեստական ֆիլմերը:



**Ջուլիա Քինգը** Նյու Յորքում բնակվող անկախ կինոպրոդյուսեր է, որ աշխատում է փաստավավերագրական եւ գեղարվեստական ֆիլմերի վրա: Նա համապրոդյուսեր է եղել AMERICAN SPLENDOR (ԸՄԵՌԻՔԸՆ ՍՊԼԵՆԴԸՐ) -ի՝ ռեժիսորներ՝ Շառի Սպրինգեր Բերմանի եւ Ռոբերտ Պուլչինիի եւ նկարահանող Թեդ Հոփի HBO Films-ի հետ համատեղ: AMERICAN SPLENDOR (ԸՄԵՌԻՔԸՆ ՍՊԼԵՆԴԸՐ)-ը շահեց Մեծ Ժյուրիի Մրցանակը 2003թ Sundance Կինոփառատոնին, FIRPRISI Միջազգային Քննադատների Մրցանակը 2003թ Կաննի Կինոփառատոնին եւ անվանակոչվեց Լավագույն Հարմարեցրած Սցենար Ակադեմիայի Մրցանակի համար:

Քինգը արտադրել է նաեւ գեղարվեստական լայնամետրաժ փաստավավերագրական THE YOUNG AND THE DEAD (ՎԸ ՅԱՆԳ ԵՆԴ ՎԸ ԴԵԴ) ֆիլմը, որը պատկերում է Լոս Անջելեսի գերեզմանատունը եւ դրա երիտասարդ տիրոջը, որի պրեմիերան կայացավ Վենեցիայի Կինոփառատոնին, ցուցադրվեց Telluride Կինոփառատոնին եւ եթեր արձակվեց HBO-ով 2000թ, եւ HELLO HE LIED(ՀԵԼԼՈՈՒ ՀԻ ԼԱՅԴ ), AND OTHER TRUTHS FROM THE HOLLYWOOD TRENCHES (ԷՆԴ ԱՎԸՐ ԹՐՈՒՖՍ ՖՐՈՄ ՎԸ ՀՈԼԻՎՈՒԴ ԹՐԵՆՉԻՍ )ֆիլմը՝ թեթեւսիրտ, բայց եւ խորաթափանց հայացք պրոդյուսերների աշխատանքին Հոլիվուդում, որը հեռարձակվեց American Movie Classics-ով 2001թ:

Բոլորովին վերջերս Քինգը արտադրեց WANDERLUST(ՎԱՆԴԸՐԼԱՍԹ) գեղարվեստական լայնէկրան ֆիլմը ճանապարհային ֆիլմերի մասին Independent Film Channel-ի համար եւ THE CARETAKERS (ԴԸ ՔԵԸՐԹԵՅՔԸՐՍ)-ը՝ 20-րոպեանոց նկարագրական ֆիլմը, որի ռեժիսորն է Էլիզաբեթ Սուբրինը, Գործադիր Պրոդյուսեր՝ Սքոթ Մաքվալեյը: THE CARETAKERS (ԴԸ ՔԵԸՐԹԵՅՔԸՐՍ)-ի պրեմիերան կայացավ 2006թ Նյու Յորքի Կինոփառատոնին:



Լոս Անջելես տեղափոխվելուց չորս տարի անց գործադիր պրոդյուսեր **Ջոե Քեվորքը** արդեն տարբեր աշխատանքներ է տարել Քեվըն Սպեյսիի Triggerstreet Productions-ի, Վալ Կիլմերի, Ֆրեդ Ռուսի եւ Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի հետ:

Որպես իրավաբան, Քեվորքն իր կարիերան մասնատել է Տորոնտոյի եւ Լոս Անջելեսի միջեւ՝ աշխատելով որպես միջազգային առեւտրի իրավաբան Օնտարիոյի կառավարությունում եւ բոլորովին վերջերս կենտրոնացել է զվարճանքի օրենքի վրա:

Նա հրավիրվել է ելույթ ունենալու ACSUS համաժողովին Հյուսիսամերիկյան դրամա- յին միությունում, եղել է Միավորված Ազգերի Կանանց Խտրականության Վերացման Հանձնախմբում (CEDAW), դասավանդել է Նոտր Դամի Համալսարանի Իրավաբանության Դպրոցում, նաեւ դատավարել է Jessup International Law Moot Մցակցությունը:

(շարունակելի)

Իր իրավաբանական գործունեության հետ մեկտեղ Ջոեն Հայկական Թատերական Արվեստի Միության (ADAA) Հոգաբարձուների Հանձախմբի անդամ է եւ համերգային  պրոդյուսեր/կազմակերպիչ՝ որպես Infinite Echo Entertainment-ի  հիմնադիր:



## Ասոսիատ Պրոդյուսեր

Ծագումով Կալիֆորնիայի Լեյք Թահոյից, **Ջեֆ Քալուստյանը** 1992 թվականից ապրում  եւ աշխատում է Հայաստանում: Նա HERE (ՀԻՐ) -ի մեջ բերում է իր 15 տարիների հայկական օպերատիվ գործնական հմտությունները, մշակույթային եւ հասարակական խորը ընկալումները:

Քալուստյանի աշխատանքը նրան տարել է աշխարհի ամենաանկայուն եւ դժվար վայրերը, ներառյալ Կոսովո, Աբխազիան եւ Լեռնային Ղարաբաղը: Մասնագիտանալով տնտեսական զարգացման եւ միջազգային հարաբերությունների մեջ՝ Կալուստյանը ղեկավարել է հետկոնֆլիկտային վերականգնման եւ տնտեսական զարգացման նախագծեր Հայաստանում, Վրաստանում, Սերբիայում եւ Մակեդոնիայում: Այս ծրագրերի հովանավորների շարքում են՝ Միավորված Ազգերի Կազմակերպությունը, Եվրամիությունը եւ ԱՄՆ Կառավարությունը:

Հայաստանում եւ Ղարաբաղում Քալուստյանը ղեկավարել է բազմամիլիոն դոլլար արժողությամբ զարգացման ծրագրեր եւ խորհրդատվություններ է տրամադրել  Միավորված Ազգերի Կազմակերպությանը, Կարմիր Խաչին, Եվրոպայում  Անվտանգության եւ Համագործակցության Կազմակերպությանը,  Փրկենք Երեխաներին, Բաց Հասարակության Ինստիտուտին, Դանիական Միջազգային Զարգացման Գործակալությանը եւ Հայաստանի Կառավարությանը: 2006թ Քալուստյանը  օգնել է նախաձեռնել Directors Across Borders ծրագիրը Երեւանի Ոսկե Ծիրան Կինոփառատոնին: DAB-ի նպատակն է ստեղծել տարածաշրջանային խաղաղություն եւ հանդուրժողականություն՝  աջակցելով միջսահմանային ֆիլմերի արտադրությանը:
Կալուստյանը ներկայումս իր ժամանակը բաժանում է ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ:



## Իրավաբանական Խորհրդատու

**Քրեյգ Էմանուելը** խորհրդատվություն է անցկացնում գովազդային եւ այլ լրատվական հաճախորդների համար բազմազան հարցերով եւ գործարքներով՝  սկսած հովանավորչական համաձայնագրերից, լրատվական եւ հանրահայտ մարդկանց տեղակայման համաձայնագրերից մինչեւ ապրանքանիշային զվարճանքներ:

Նրա գործունեությունն ընդգրկում է նաեւ բարձր մակարդակի գրողների, ռեժիսորների, դերասանների եւ պրոդյուսերների ներկայացումներ կինոյի եւ հեռուսատեսության գործարքներ բոլոր բնագավառներում, ե՛ւ ստուդիայի ե՛ւ անկախ մակարդակներով: Էմանուելը ներգրավված է նաեւ գլխավոր ստուդիաների հետ տեղաբաշխման ռազմավարական հարաբերությունների բանակցություններում, ներառյալ թվային լրատվամիջոցների բովանդակության արտոնագրում:

Պր. Էմանուելի հանրահայտ հաճախորդների թվում են՝  Թոնի Գիլռոյը, Ռոբերտ Ռոդրիգեզը, Ռայն Մըրֆին, Գաբրիել Մուչինոն, Լեյն Սոֆթլին, Փիթեր Չելսոմը, Ռասըլ Մալքեհը, Ալեքս Փռոյասը, Ստեֆըն Էլլիոթը, Դան Հարիսը, Գերի Սքոթը, Սքոթ Թոմսոնը, Գերի Օլդմանը, Ջուլի Դելփին, Լիլի Սոբիեսկին, Վանեսսա Մարսիլը եւ Փոլ Հոգանը: Նրա պրոդյուսեր հաճախորդներից են Մարք Օրդեսկին, Ուիլիամ Հորբերգը, Էնթընի Բրեգմանը եւ Դոն Մըրֆին: Նա ներգրավված է եղել մեծաթիվ անկախ ֆիլմերի ստեղծման մեջ թ՛ե տաղանդավոր դերասանների եւ թ՛ե պրոդյուսեր հախաճորդների խնդրանքով: